

Պ-175¹-11.12.2012,02.04.2013-ԱՄ-010/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասը «հանգստանալու,» բառից հետո լրացնել «երեխաներին կրծքով կերակրելու,» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող իննսուներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», ««Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», ««Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և ««Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ				
ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱՄԻՍՄԱՆ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ՄՆԵԴԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ				
	Առաջարկության հեղինակ	Նախագծի փոփոխվող մաս	Առարկության, առաջարկության բովանդակություն	Եզրակացություն
1.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան, Մ. Մինասյան	Նախագծի 5-րդ հոդված	5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «կարգի հաստատումը» բառերը փոխարինել «կարգի սահմանումը» բառերով:	Առաջարկն ընդունված է
2.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան, Մ. Մինասյան	Նախագծի 12-րդ հոդված	12-րդ հոդվածում՝ 1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների, մինչև 6 ամսական մանուկների համար մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող ցանկացած սննդամթերքի և հարակից ապրանքների գովազդը և (կամ) խրախուսման այլ ձևերն արգելվում են:»: 2. 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. « 2. Խրախուսման արգելված այլ ձևերն ընդգրկում են՝ 1) հատուկ ցուցահանդես-վաճառքները, շնորհանդեսները, շահումները, պարգևների, մրցանակների, նվերների շնորհումը, զեղչի կտրոնների կիրառումը, ինչպես նաև զեղչային կամ որևէ այլ խրախուսական նպատակներ հետապնդող	Առաջարկներն ընդունված են

			<p>գնային քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը, ցուցադրումը, տարածումը կամ այլ ձևով հրապարակայնորեն հասանելի դարձնելը.</p> <p>2) մանկական սննդի և հարակից ապրանքների նմուշների տրամադրումը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:»:</p>	
3.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան, Մ. Մինասյան	Նախագծի 16-րդ հոդված	<p>Հաշվի առնելով, որ օրենքի նախագծի տեքստում կիրառվում է «մանկական կաթնախառնուրդ» հասկացությունը, առաջարկում ենք՝</p> <p>16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում «մանուկների և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների» բառերը փոխարինել «մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների» բառերով:</p>	Առաջարկն ընդունված է
4.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան, Մ. Մինասյան	Նախագծի 17-րդ հոդված	<p>Հաշվի առնելով, որ «պիտակներին» բառը տեքստից բաց է թողվել, առաջարկում ենք՝</p> <p>17-րդ հոդվածի 3-րդ մասում «ապրանքներին» բառը փոխարինել «ապրանքների պիտակներին» բառերով:</p>	Առաջարկն ընդունված է
<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ</p>				
1.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան, Մ. Մինասյան	Նախագծի 1-ին հոդված	<p>Քանզի «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքի նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասը վերախմբագրվել է, առաջարկում ենք նմանատիպ փոփոխություն կատարել նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում և 1-ին հոդվածով լրացվող 47.8-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«3. Մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների, մինչև 6 ամսական մանուկների համար մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող ցանկացած սննդամթերքի և հարակից ապրանքների գովազդը և (կամ) խրախուսման այլ ձևերը՝</p>	Առաջարկն ընդունված է

			առաջացնում են տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:»:	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ				
1.	ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Ա. Բաբլոյան, Մ. Մինասյան	Նախագծի 1-ին հոդված	<p>Հաշվի առնելով, որ «Երեխաներին կրճքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքի նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասը վերախմբագրվել է, առջարկում ենք նմանատիպ փոփոխություն կատարել նաև ««Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում և 1-ին հոդվածով առաջարկվող լրացումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«6. Մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների, մինչև 6 ամսական մանուկների համար մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող ցանկացած սննդամթերքի և հարակից ապրանքների գովազդն արգելվում է:»:</p>	Առաջարկն ընդունված է

